# Ջավախք. միայնակ վրաց ազգայնականության դեմ

Սկիզբը՝ էջ 1

Այստեղ այնքան էլ կարեւոր չէ, թե ռուսների ուզած 500 միլիոնից որ մասն է պատրաստ տրամադրել ԱՄՆ-ը: Կարեւորն այն է, որ Ռուսաստանը Վրաստանում իր ազդեցության ոլորտը պատրաստ է մի քանի հարյուր միլիոնի դիմաց զիջել ԱՄՆ-ին:

«Ռուսաստանի այս հայտարարությունները ջավախահայությունը վատ է ընդունում, վախվորած է: Ռուսները ինչպե՞ս կարող են հեռանալ Ախալքալաքից: Ջավախահայությունը կանի իրենից կախված հնարավորը, որպեսզի ռուսական զորքերը չհեռանան», **«Ազգի»** հետ զրույցում ասաց Ախալքալաքում գործող «Վիրք» կուսակցության ղեկավար Դավիթ Ռստակյանը:

«Եթե Ռուսաստանը չցանկանա Ախալքալաքից հանել 62-րդ ռազմակայանը եւ դրա համար պետք է լինի ու բավարար լինի մեր օգնությունը, ամեն ինչ կանենք, որ զորքերը մնան տեղում», ասաց Ռստակյանը:

62-րդ ռազմակայանը ջավախահայության համար ապահովում է մոտ 2000 աշխատատեղ, տեղացիների համար ռազմակայանը նաեւ գյուղատնտեսական մթերքների սպառման գրավիչ շուկա է: Սա, անշուշտ, կարեւոր գործոն է: Սակայն առավել կարեւոր է հոգեբանական գործոնը. ջավախահայության մի քանի սերունդներ ռուսական ռազմակայանը եւ ռուս զինվորին ընկալում են իրենց անվտանգության գլխավոր երաշխավորը:

Ռուսների հեռանալու դեպքում ջավախահայությունը կմնա միայնակ վրաց ազգայնականության դեմ ու այլ ելք չի ունենա, քան լքել երկրամասը կամ ձուլվել: Սա բոլորովին էլ հոռետեսական կանխատեսում չէ: Համենայն դեպս, Շեւարդնաձեի իշխանության տարիներին, այդ թվում՝ խորհրդային շրջանում, վիրահայության մի հատված երկրից հեռանալու կամ վրացի դառնալու ճակատագրին է արժանացել:

Ջավախքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, որ մշակվում էին Թբիլիսիում, մնացել են թղթի վրա՝ փող չլինելու պատճառաբանությամբ: Եթե Վրաստանը, այս դեպքում՝ երկրի նոր իշխանությունները ռուսներին Ջավախքից արտաքսելու համար գումարներ կարողանում են գտնել, ապա՝ ցանկության դեպքում հնարավոր է գումարներ գտնել երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Ռստակյանն ասում է, թե, նախ «Վրաստանն ի վիճակի չի լինի հայթայթել 500 մլն, իսկ եթե հաջողվի, ապա ռուսները Ախալքալաքից չհեռանալու այլ պատճառ կգտնեն»: Բայց արդյոք սա լուծո՞ւմ է:

Վրաստանի նոր իշխանությունները՝ ի դեմս նախագահ Սաակաշվիլու, հասցրել են խոստումներ շռայլել, թե կգտնեն Ջավախքի սոցիալական խնդիրների լուծման ճանապարհներ: Մինչդեռ ջավախահայության անվտանգության կայուն երաշխավորը ոչ ռուս զինվորն է ու ժանգոտած ռուսական զենքը, ոչ խոստումները, այլ հայ-վրացական ամուր կապը, փոխադարձ վստահությունը:

Հակառակ դեպքում ստիպված կլինենք փակել Հայաստանին արտաքին աշխարհի հետ կապող ոչ թուրքական միակ պատուհանը: Ու բոլորովին էլ կարեւոր չէ, թե դեռ քանի տարի կշարունակվի Ռուսաստանի կամավոր ստորացումը Կովկասում:

**Լուծարվում է**

«ՎԵԳԱ» երիտասարդական մշակութային հասարակական կազմակերպությունը՝ գրանցված ՀՀ պետռեգիստրում, գրանցման վկայական՝ N 211.171.00452, ՀՎՀՀ 01830966:

Պարտատերերը 1 ամսվա ընթացքում դիմեն լուծարման հանձնաժողով. ք. Երեւան, Բաբաջանյան 47, 45 հասցեով:

UNIVERSITY OF CAMBRIDGE
Judge Institute of Management
cambridge's business school
Eurasia Programme

Eurasia Programme at the Judge Institute of Management, University of Cambridge, in collaboration with the Foreign and Commonwealth Office of the British Government, the Manoukian Charitable Foundation, and St. Sarkis Charity Trust, is offering a number of executive education, research and degree programmes for postgraduate students and young professionals in Armenia.

The programmes are designed to provide unique opportunities for Armenia's high potential scholars and profesioals to take part in educational programmes in two world-class educational institutions: University of Cambridge in the UK and Harvard University in the United States.

The primary goal of the Eurasia Programme's Armenia project is to contribute to Armenia's long-term educational, academic and economic development through the training of future leaders, decision makers, and public servants.

# Business Executive, Research and Degree Programmes for Armenia

Եվրասիա միջազգային ծրագիրը բացառիկ հնարավորություն է ընձեռում Քեմբրիջի և Հարվարդի աշխարհահռչակ համալսարաններում ուսանելու քաղաքագիտություն, տնտեսագիտություն, գործարարություն և ֆինանսներ:

Առավել մանրամասն ծրագրերի և դիմումների վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ դիմելով՝

Եվրասիա կենտրոն
Երևան 375019
Բաղրամյան պողոտա 9, բն. 2
Հեռախոս՝ 56 31 32, 54 06 23

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Բաց Բժշկական Ակումբ» հասարակական կազմակերպությունը իրականացրել է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության ու սպասարկման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների նկարագրով բրոշյուրի տպագրությունը՝ ազգաբնակչությանը ծանոթացնելու նպատակով:

Բոլոր քաղաքացիները եւ հասարակական կազմակերպությունները կարող են անվճար ձեռք բերել այն հետեւյալ հասցեով՝

Չարյան 5/1, Բժշկական Գենետիկայի Կենտրոն, 1 հարկ, 10.00-15.00
Տեղեկությունների համար զանգահարել՝ 544-367

ARMENTEL

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆՏԵԼԻ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ**

2004 թվականի հունվարի 1-ից գործում է ռոումինգ ծառայություն «Արմենտել» ՀՁ եւ «Ղարաբաղ տելեկոմ» ընկերությունների միջեւ:

«Արմենտել» ՀՁ Հասարակայնության հետ կապերի ծառայություն

**«ՆԱՄԱԿԱՆԻՇ» ՓԲԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ**

«Նամականիշ» ՓԲԸ հայտարարում է 2004 թ. փոստային նամականիշերի նախագծման (դիզայնի) մրցույթ հետեւյալ թեմաներով.

1. EUROPA 2004. Արձակուրդ
2. Հայաստանի բուսական եւ կենդանական աշխարհ. միջատներ
3. Արմեն Տիգրանյանի ծննդյան 125-ամյակը
4. Միքայել Նալբանդյանի ծննդյան 175-ամյակը
5. Մուրացանի ծննդյան 150-ամյակը
6. Հայաստանի գիտությունը եւ տեխնիկան
7. XXVIII Օլիմպիական խաղեր
8. Ռուսական արվեստ
9. Ֆուտբոլի համաշխարհային ֆեդերացիայի 100-ամյակը

Մրցույթին մասնակցողները կարող են ծանոթանալ պայմաններին Մաշտոցի 43 հասցեով, հեռ.՝ 56-93-34, աշխատանքային օրերին՝ ժամը 15.00-18.00, իսկ աշխատանքները ներկայացնել «Նամականիշ» ՓԲԸ, ք. Երեւան, Սարյանի 22 կամ Մաշտոցի 43 հասցեներով մինչեւ 2004 թ. փետրվարի 1-ը, ժամը 17.00:

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«[illegible]» տպագրատուն, Երեւան, Բաղրամյան 70ա. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 15. 01. 2004. Գինը՝ 100 դրամ